

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱԳՐԱԿԱՆ

Ա. Ռ.

ԳԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԽԵցք



Ամանակն կը սահի միշտ անզդալի կերպով ու կը թաքչի 'ի ծոց յաւի-
տենից , նմանելով մեծանիստ ու լայնատարած գերեզմանի , որ ժողովէ
յինքն զանուանս , զիշատակս , զգործս , զաւանդութիւնս և զարարս մար-
դոյ ու աշխարհի , թողլով իր ետևէն . . . , ինչ բան թողլով . — անշուշտ
ինչ ինչ բարի գործեր , ինչ ինչ մեծ ու ազնուական գաղափարներ . լուսաւոր կո-
տորք համաստեղութեանց , որ պարտին յանսահման միջոցի , կէտք որ շող-
շողեն իրը զաստեղս՝ անցելոյն խաւարային մթնոլորտին մէջ . — և ապա յետ
այսոցիկ՝ ոչընչութիւն , մժութիւն և ըռութիւն : Երանի թէ այդպէս մնար . բայց
թէ որ խորամուխ ըլլամք 'ի ծոց անցելոյն , կը նկատեմք բազում տխուր պատ-
կերներ նսեմացուցիչք մխիթարական պատկերաց : — Ա. Ջ. ոչ ումեք անիրաւի
ժամանակն , արգար է նա 'ի կշիռա իւր , երբեմն փունջ մի երփնագեղ ծաղկանց
ընծայելով և երբեմն պատկ փշանիւթ : Վասն սրոյ եթէ ետևնիս գառնանք ու
նայինք՝ հայեացք մը տալու անցելոյն , մխիթարութիւնք ու տիսրութիւնք միան-
գամայն կը գրաւեն զմեզ . վասն զի ուրիշ բան չեմք նկատեր , եթէ ոչ անսահ-
ման Ռվիլիանոս մը գործոց՝ խառն ընդ մխիթարականն և ընդ տիսրական :

Բազմավեպն իր Նոր Երջանին երկրորդ տարին ալ աւարտելով , ունեցաւ
ինքն ալ նոր կենաց անցեալ մը , բայց արգեօք մխիթարական թէ տիսրական ,
թողլով զայն ներողամիտ բաժանորդաց գատաստանին , վկայութեամբ խղճի
մոտաց թէ նպատակն եղաւ սոսկ ուղղութիւն , և լի ակնկալութեամբ թէ պի-
տի կարենայ տակաւին շարունակել նոյն ազգօգուտ նոյնատակը , կը թեակո-
խէ յերրորդն : կը ներկայանայ Հայրենեաց զուարթ ու վստահ դիմօք , վասն
զի համողեալ է՝ թէ նա շատ իսկ ըմբռնած ըլլալով յառաջադիմելոյ պէտքն ու

օգուատը, կը տքնի արդէն մեծաջան՝ իմանալ զուվիղն, հետեւ բարւոյն, և արդինաւորել ընկերական ու տնական առաքինութեանց սերմանքը, զորս Աստվածանկած է իւրաքանչիւրոց սրտին մէջ:

Ինչպէս մէն մի անհատից՝ նոյնպէս և ամբողջ ժողովրդոց բարերաստութեան գլխաւոր աղբիւրքն երեք են. Հարստորքիւն, իշխանուրիւն և Գիտութիւն: Հարստութիւնը կրնայ առաջնորդել յիշխանութիւն, և իշխանութիւնն ՚ի հարստութիւն, բայց երկուրքէն և ոչ մին ՚ի գիտութիւն. մինչ դեռ սա կարող է տանել եթէ ՚ի հարստութիւն և եթէ յիշխանութիւն:

Մեծ է ուրեմն գիտութեան զօրութիւնը, և ինչպէս ըստ մեծահանճար գրի մը, նա եղաւ բանալի այժմեան քաղաքակրթութեան վեհափայր տաճարին: Քանի խեղճ ու աննըշան արուեստաւորք՝ զիտութեան ձեռքով միլիոնի տէր եղան, և բազումք ՚ի Պաշտօնէից և ՚ի Զօրագլխաց Գիտութեանց՝ նոյն սանդղով հասան այնպիսի գերագոյն իշխանութեան ու հարստութեան: Ուստի յայսնի է թէ գիտութիւնն կը գերանզանցէ զհարստութիւն և զիշխանութիւն, վասն զի պատճառ է անոնց: — Գիտութիւնն մեծ է դարձեալ և այնու, որ բաց ՚ի հարըստութենէ և յիշխանութենէ՝ առաջնորդէ ևս ՚ի համբաւ. և համբաւն կրնայ մեր անտոնը մշտնէնաւորել երկրիս վրայ անմահութեամբ: Բայց անտարակցոյս մեծապէս կը սիսալի այն մարդն՝ որ համարի ուսանել սոսկ ուրիշները գերազանցելու վախճանաւ: Ուսանելը պարագ մ'է. եթէ չուսանիմք՝ կը զրկուիմք այն միջոցներէն որովք պիտի ճանչնամք իրաց մեծագոյն մասը, պիտի վերանամք հոգեւով և լաւագոյն վիճակ մը պիտի աւնումք ընկերութեան մէջ:

Այս այսպէս ըլլալով, կը ցաւիսկ երբ կը մոտածեմք որ առաջին ժողովրդոց մէջ գիտութիւնը ընկերութեան մէկ քանի անդամոց միայն սեփականեալ էր բացարձակ կերպով, իր բարերաշխ ճառագայթներն ումանց վրայ ցողացնելով ու յայլսց ամիկոփերով: Բայց այժմու ժամանակիս ժողովուրդք բոլորովին ուրիշ ճամբայ բռնեցին. քաջափորձք անցելցին, լաւ իմացան որ իմաստութեան տաճարը պէտք է որ բաց ըլլայ ամենայն մարդոց, որպէս զի ճանչնայ ինքն զինքը, ճանչնայ զմարդկութիւն, և զարգացնելով միտքն ու սիրտը՝ սատար ըլլայ յառաջադիմելոյ ընկերութեան, ըստ չափու և ըստ համեմատութեան վերնատուողին բարութեանց:

Թէ և չունենայինք ուրիշ պատճառ ապացուցանելու թէ որչափ լաւցած է ընկերութեան վիճակը հիմա քան երբեմն, բաւական էր միայն՝ համոզուելու համար առ այն, մոտածել թէ որչափ փոյթ կը տարուի հիմա կրթութեան քան ուրիշ ատեն: կը տեսնամք աշխարհիս ամեն կողմը ընդհանուր խլբտում մը. ամեն լուսամիտ և իմաստուն մարդոց մոտադրութեան առարկայն ժողովրդեան կրթութիւնն եղած է: Ամենքն զբաղած են իմանց հայրենիքը շնչնցրնելու. մասնաւոր ջանք մը կայ մէկ քեւուէն ՚ի միւսն՝ զիտութեան լուսով մերժել տգիսութեան խաւարը. ամենայն ինչ շարժման և յեռացման է. ամենայն ազդք և ժողովուրդք մի և նոյն ճամբան կը քալեն և մի և նոյն նպատակին կ'ուղեն գիմել, այն է բարգաւաճանք, յառաջադիմութիւն և երջանկութիւն: — Տարակցս չկայ

որ այս նպատակիս գիւրադոյն յաջողութեան սատար եղած է նաև ապագրութեան գիւտը՝ ուսկից զրկի էին երբեմն, որ և, ինչպէս ըստ Ամերիկացի գիտնական մը, հայր եղաւ սյժմու քաղաքակրթութեան: Եւ մենք կը յաւելում որ ապագրութիւնն այն յայտնութեանց մէկն է՝ զոր զատուած պահեր էր 'ի ծածուկ, ընծայելու զայն մարդկան 'ի գէպ ժամանակի, առաջնորդելով 'ի կատարելութիւնն առ որ սահմանեալ էր 'ի յաւիտենից:

Եթէ ամենայն աղքք 'ի շարժման են, ինչ կ'ընէ չայ ազգը. կը վաստակի արդեօք ինքն ալ ուղիղ ճամբով դիմելու յուղիղ նպատակն յառաջադիմութեան: — կը վկայեմք որ արդէն շարժման մէջ է. բայց գիտնալու է որ յառաջադիմութիւնն ընկերական ստոյդ բարիք մ'ըլլալու համար, հարկ է որ ստոյդ բարոյականի վրայ յենու, որով միայն կը մնանի հոգին, կը զօրանայ միտքն, և կ'ուրոշէ զբարին 'ի շարէն ու զարդարն յանիբաւէն: Թէ որ կ'ուղիմք յիրաւի երջան. կացնել մեր հայրենիքը և ծաղկեցնել, դիմենք ուղիղ ճամբով, սիրոյ և խաղաղութեան հոգւով 'ի բարին, 'ի գիտալիթիւնն և յարուեստս, և ձեռն տանք փոփոխակի իրարու, 'ի բաց թօժափելով հնացեալ բաժանմունքները ու տարածայնութիւնները: Քանի որ միտք ու սիրաք յուղեալ են, ալէկոծելով զամենայն և զամենեսին միանգամայն, չիք հնար ճշմարիտ յառաջադիմութեան. քանզի ներքին ալէկոծութիւնք ունին իրենց ազդեցութիւնը նաև արտաքնոյն վրայ, այսինքն դպրութեան, գիտութեան, վաճառականութեան և արուեստից բարգաւաճանաց վրայ: Ուստի որչափ յապաղէ այս փափառելի անդորրութիւնը, այնչափ աւելի պիտի յամենայ մեր ստոյդ յառաջադիմութիւնը. քանի որ իրբն համասեռք՝ չամալեզուք՝ չիրենք զիրար, գժուարահնար է մեր քաղաքակրթութիւնը:

Բայց քաղաքակրթութիւն ըսելով չեմք իմանար միայն այն դիւրութիւններն՝ որ յառաջ գան 'ի զարգացմանէ գիտութեանց, արուեստից և տուրեասիկ վաճառականութեան. այլ ճշմարիտ քաղաքակրթութիւնն մեր մոտաւոր ու բարոյական կատարելութեանց զարգացման վրայ է, որով միայն կրնակք ճանչնալ և տալ զոր ինչ պարտիմք մեր Ստեղծօղին, անձին, ծնօգաց, հայրենեաց, բարեկամաց, և անխտիր բոլոր մեր նմանեաց: — Քաղաքակրթութիւնն և ոչ իսկ մեծամեծ աշխարհակալութեանց ու մեծամոխ հարստութեանց վրայ կայանայ, Հինն չոռվմ տակաւին հարուստ և տէր էր գողցես բոլոր աշխարհի, բայց վաղ էսկ խոտորեր էր իր նախնեաց առաքինութեան շաւղէն: Ըսածնուս ուրիշ զօրաւոր օրինակ մ'ալ ըլլայ նորն չոռվմ բարիզ, Գաղղիա, որ թէպէտ յաջողեալ էր ամենայն արտաքին երջանկութեամբք 'այլ քանզի չէր հաստատեալ 'ի վերայ հիմանց բարոյականին, անկաւ 'ի վտանգ կործանման:

Ուստի մեր յառաջադիմութեան գլխաւոր կէտը բարոյականն ըլլայ, և յայն ժամ այնպէս կը սիրեմք զհայրենիս և զնմանիս, որ մինչև մեր առանձին շահերն էսկ կը զոհեմք յօդուս նորա: Զրոց բնութիւնն մեղի օրինակ ըլլայ. որոնք թէպէտ յօտար աղբերաց կը բլիսեն և 'ի հակառակ կողմանց երկրի գան, ասկայն ամենքն ալ երբ իրարու կը պատահին, այնուհետև կը մոռանան իրենց աղբիւրը,

և կը միանան ու կը կազմեն մի մարմին և մի ընթացք , մի և նոյն ճամբան կըտ .
բելով : Բոլոր համագոյք պէտք ունին իրարու . ինչպէս ոչ ոք և ոչ ինչ կարէ ի՞նչ
յանձնէ , նոյնպէս և ոչ վասն անձին . աիեղիրք ողջոյն , թէ որ աղէկ դիտելու
ըլլամք , կը տեսնաւիք որ անընդհատ ու ընդհանուր սեղան մ'է զոհի , յորոյ վերայ
շարունակ փոփոխակի անձնազո՞հ նուիրութիւնք կը կատարուին էակաց փու-
խանակ միմեանց : Բնութեան հիանալի կարգն է որ ամենայն արարածք սիրեն
զիրար , օգնեն իրարու , կազմելով գաղտնի և ընդհանուր ներդաշնակութիւն
մը , աչաց տեսանելի բայց մոտաց անիմանալի :

Ուստի եղբայրակցինք իրարու հետ , սիրենք զՀայրենիս , խնդրենք յամե-
նայնի նորա ստոյգ փառքը , ճշմարիտ պատիւր և բարի համբաւը . կանգնենք ան-
շահասէր հոգւով հիւանդանոցներ , աղքատանոցներ , վարժատուններ և ուսու-
մական ընկերութիւններ : Փոյթ ըլլանք մշակելու ազգային լիզուն և գրակա-
նութիւնը , անխախուտ պահելով նորա յատկացուցիչ սեփական նշանները և
նախնեաց յիշատակները . քանզի այս բնական զգածմամբ միայն կը դիւրանայ
մեր քաղաքակրթութեան գործը : Արիանանք ուրեմն յօգուտ ազգիս , մեր ամեն
մտածութիւնները առ նա վերաբերենք . և ինքն ըլլայ մեր ջանից , մեր ըղձից ,
մեր փափաքանաց , և մեր ամենայն գործոց նպատակը :

